ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 992-Ա

«05» նոյեմբերի 2025 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԶԳԱՎՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 80 ՀԱՍՑԵԻ 08-037-0003-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սիմոն Միասնիկի Գևորգյանը (ծնված 1978 թվականի նոյեմբերի 14-ին) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համասեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայրի, 3-րդ փողոց 80 հասցեում գտնվող, 0,12117 հեկտար մակերեսով, 08-037-0003-0011 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա, ինքնակամ կառուցված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Համասեփականության իրավունքով իրենց ընտանիքին պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 330.29 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, աստիճանը, շվաքարանները, ավտոտնակը, գոմը և պարիսպները կառուցվել են 2015 թվականից մինչև 2017 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չեն խախտում

այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024TE5WC2 ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված, շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների սահմանված չափը՝ որը Երազգավորս բնակավայրի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է և հիմք ընդունելով Սիմոն Միասնիկի Գևորգյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս բնակավայրի, 3-րդ փողոց 80 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված 330.29 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, աստիճանը, շվաքարանները, ավտոտնակը, գոմը և պարիսպները ճանաչել օրինական՝ սահմանված վճարների դիմաց:
2. Սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության 166,19 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տան, շվաքարանի և աստիճանի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 դրամ, իսկ 164,1 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակի, գոմի, շվաքարանի և պարիսպների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար

սահմանել 6000 դրամ, որոնց նկատմամբ կիրառվում է շինության տարածագնահատման գոտիականության 0,0743 գործակիցը:

3. Շինությունների օրինականացման համար հաշվարկված ընդհանուր գումարը կազմում է 196635 (մեկ հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր երեսունհինգ) դրամ, որից 123479 (մեկ հարյուր քսաներեք հազար չորս հարյուր յոթանասունինը) դրամը բնակելի տան, շվաքարանի և աստիճանի օրինականացման արժեքն է, իսկ 73156 (յոթանասուերեք հազար մեկ հարյուր հիսունվեց) դրամը ավտոտնակի, գոմի, շվաքարանի և պարիսպների օրինականացման արժեքն է:

4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետում նշված ընդհանուր գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի համասեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«05» նոյեմբերի 2025 թվական
գյուղ Ախուրյան